

# Գորիս քաղաքի ջրամատակարարման ցանցի գոտիավորում, բարելավում



**Երկիրը.** Հայաստանի Հանրապետություն

**Մարզ, քաղաք** Սյունիքի մարզ, ք.Գորիս

**Պատվիրատու** ՀՀ Քաղաքաշինության նախարարություն


**Ժամկետները.** 2000 – 2001 թթ.

## Ծառայության մոտավոր զինք

16.7 մլն. դրամ


## Տեխնիկական առաջադրանք

1. Նախանախագծային ուսումնասիրություններ և բաշխիչ ցանցի համակարգի մոդելավորում
2. Ջրամատակարարման բաշխիչ ցանցի գործիքային հետազոտում և գույքագրում
3. Աշխատանքային նախագծերի մշակում



### Ծրագրի և կատարված ծառայության համառոտ նկարագիրը.

- ✓ Մշակվել է քաղաքի հատակագիծը GIS (ArcView software) ծրագրով ջրամատակարարման գոյություն ունեցող համակարգի պատկերմամբ: (Քաղաքի բնակչությունը՝ 29200 մարդ, մակերեսը 400 հա, միջերի տարբերությունը՝ 300 մ, ջրամատակարարման համակարգը՝ ինքնահոս):
- ✓ Կատարվել է ջրամատակարարման բաշխիչ ցանցի հանգույցների և խողովակագծերի խորության ու ուղեգծի որոշում, գույքագրում, վիճակի գնահատում, թելադրող հանգույցներում ելքերի ու ճնշումների չափումներ և գրանցումներ:
- ✓ Մշակվել է քաղաքի ջրամատակարարման համակարգի հիդրավիկական մոդելը EPANET համակարգչային ծրագրով: Դաշտային ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա կատարվել է ցանցի գոտիավորման և հիդրավիկական մոդելի ճշգրտում:
- ✓ Մշակվել է առաջնահերթ բարելավման ենթակա տարածքների ջրամատակարարման ցանցի վերակառուցման աշխատանքային նախագիծ: Նախագծվել են նոր 3 խումբ ՕԿՁ-ներ՝ ընդհանուրը 3600 մ<sup>3</sup> ծավալով, 1.5 կմ երկարությամբ սնող ջրատարներ, 3.8 կմ երկարությամբ փողոցային ջրագծեր, բաշխիչ և կարգավորիչ 42 հանգույցներ, 35 հրշեջ հիդրանտի հանգույցներ, 85 մուտքագծի հանգույցներ և այլն: Մշակվել են տեխնիկական մասնագրեր, ծավալների ամփոփագրեր, շին. աշխատանքների կազմակերպման նախագիծ և նախահաշիվներ:
- ✓ Մշակվել է քաղաքի ջրամատակարարման համակարգը GIS-ով ներառյալ տեխնոլոգիական հիմնական տարրերի (հորեր, կարգավորիչ և ջրաչափական հանգույցներ, ջրագծեր) տեխնիկական տվյալների բազայի ստեղծմամբ, որը կբարձրացնի շահագործման գործընթացի արդյունավետությունը:



## Աշխատանքի նպատակն է

Գոտիավորել ներքաղաքային բաշխիչ ցանցը և բարելավել քաղաքի ջրամատակարարման ցանցի անխափան աշխատանքը, բարձրացնել խմելու ջրի որակը և ապահովել բնակչության ջրապահանջը:

Նպաստել համակարգի հետագա շահագործման արդյունավետության բարձրացմանը:

